

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ
(V—X ԴԱՐԵՐ)

Պատմ. գիտ. դոկտոր Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

1. 1. 297 թ. Փոքր Հայքի (Մելիտինե կենտրոնով), ապա և 385/7-ին Մեծայ Հայոց արևմտյան զավառների միացումով և որակազուց Արևելահռոմեական կամ Բյուզանդական կայսրությունը փաստորեն դառնում է հայոց միջնադարյան պատմությունը ներառող կարևոր կազմավորումներից ու կեստրոններից մեկը: Եվ եթե մասնադիտական դրականության մեջ (Ն. Աղոնց, Ա. Կասպան, Կ. Խարանխ և այլք)¹ այն դիտվում է իբրև մասամբ հայկական հավարականություն, ամենևին կայսերական ընտանքներից մի քանիսի հայկական սերունդը նկատի չունեն, այլև՝ հայերի էթնիկական ներկայությունը, նրանց շարունակական մասնակցությունը կայսրության քաղաքական, ուղղափառ, տնտեսական ու մշակութային անցուղարձակում: Դատելով Հուստինիանոսի նովելների վկայություններից, մինչև 536 թ. Բյուզանդական Հայաստանում ևս պահպանվում էր նախարարական կարգը, ուրեմն և հողի սեփականատիրության հայկական ավանդական ձևերը²:

1. 2. Մենք շատ սովյալներ չունենք պարզելու համար, թե կայսրության պատմության առաջին դարերում այլ էթնիկ բնակչությունը լեզվական ու մշակութային շփման ինչ աստիճանի սերտացում էր ապրում: Երկու դաս, սակայն, թեև պարզում են կարծել, որ այլ էթնիկ համայնքները հունախոս դարձնելու հարկադրանք չի եղել. դուրս գա մասամբ էլ պայմանավորված է նրանով, որ ինքը Բյուզանդիան ևս առաջին դարերին շարունակում էր երկրակալ մնալ՝ արքունիքի-պաշտոնեության առումով յատկապես, եկեղեցին՝ դերագանցապես հունալեզու: Բարսեղ Կեսարացու 372 թ. դրած նամակից հայտնի է, թե կապողովկյան այդ խոշոր հեղինակությունը նախընտրելի էր համարում, որ հայկական զավառների եպիսկոպոսական աթոռներին հայերենին պիտակ հոգևորականներ նստեն³: Փաստերից երկրորդը բյուզանդական արքունիքի, հոգևոր և աշխարհիկ իշխանության սատար կանգնելն է նորաստեղծ ազգային զպրությունը կայսրությունը ընդգրկված հայաբնակ զավառներում դործադրելու Մաշտոցի տաքելությունը: Կորյունը շատ հստակ վկայում է, թե նա «ի կողմանս Յունաց» «ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին և յիշխանաց և ի դաւառականացն պատուեալ լինէր, մանաւանդ ի սպայադեալէն աշ-

¹ Nicolas Adontz. Etudes armeno-byzantines. Lisbonne, 1965; A. П. Каждан. Армяне в составе господствующего класса Византийской империи в XI—XII вв., Ереван, 1975. Պ. Խարանխ. Հայերը Բյուզանդական կայսրության մեջ, Թարգմանեց Չ. Պերպերյան. Վիեննա, 1966:

² Հմմտ. Ն. Աղոնց. Հայ հին շինականությունը.—Պատմական ուսումնասիրություններ, լույս ընծայեց Ա. Խոնդկարյան, Պարիս, 1948, էջ 164:

³ Աղբյուրներն ու քննությունը տե՛ս Կիմ Մուրադյան. Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ. Երևան, 1976, էջ 110 և շար.: Հատկապես ուշադրալից այն է, որ նման պահանջ էր առաջադրվում Հայոց գրի ու զպրության ստեղծումից տասնամյակներ առաջ. երբ մասնացությունը լեզուն առավելապես հունարենն էր, և մասամբ ասորերենը:

խարհին, որ անուանեալ կոչէր Անատողիս»⁴։ Ապա կայսերական «ղանրնդդիմակայ» հրաման է ստանում «վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ կէս սողէն Հայոց ժողովկոյ», «բազմութիւն մանկտոյ ժողովկւ և նոցին ոռճիկս կարպկլ ի պատահադոյն տեղիս, յորս և երանելիին զվարդապետութիւն իւր ի դործ արկեալս և ժողովկոյն քաղցրացուցանէր»⁵։

1. 3. Մաշտոցը Կոստանդնուպոլիս էր հասել Դերջանի կաթակոպոս Գիւնթիի և սակավաթիվ աշակերտներին ուղեկցութեամբ, թե այստեղ նրանց բնդունողներին մեջ հայերը ինչ թիվ էին կազմում՝ կամ իր զոյնութեան մեկ զարբոյրտած մայրաքաղաքում հայկական համայնք կա՞ր թե ոչ՝ դժվար է ասել։ Գիտենք միայն, որ այդ այցելութեան ընթացքում «բազում շնորհազիր մաստանսս զհարցն եկեղեցոյ ստացեալ՝ ձովացուցանէք... քվարդապետութեանն զխորութիւնն և լցեալ զկոյր ամենայն բարութեամբ»⁶։ Կորյունի խոսքերից չի երևում, թե Մաշտոցն իր Սնտվք ե Դտնան աշակերտներին ո՞ր էր «վերակացուս հաստացելոցն» թողնում՝ մայրաքաղաքում, թե՞ Փոքր Հալւում։ Բայց զստահարար կարող ենք ասել, որ «ի քաղաքն Եղևացոցոց» ասորերկնից հայերին թարգմանութուններ կատարելու ուղարկված Եղնիկն ու Հովսեփը՝ «կատարեալ զհրամանսն և առ պատուական հարսն առաքեալ, անցեալ զնային ի կողմանս Յունաց, ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանչիս կարգէին ըստ հելլենական լեզուին»⁷։ Հաջորդ պարբերութունից պարզ է դառնում, որ այդ «ի կողմանս Յունացը» Կոստանդնուպոլիսն է, քանի որ Հայաստանից եկած Կեոնդեան ու Կորյունը Եղնիկին են միանում (յարէին) «ի Կոստանդինական քաղաքին և անդ միաբանութեամբ հոգեոր պիտոյիցն զխնդիրն վճարէին»⁸։

Այսպիսով, եթե այս ամենին դումարենք Տիրանի որդի Տրդատի և թոռ Տիրիթի, ինչպես նաև Պապի և Ներսես Մեծի պատանդութունները Բյուզանդիոնում⁹, Սահակի թոռ Վարդանի մասնակցությունը Մաշտոցի առաքելությանը Կոստանդնուպոլսում (խորենացին նամակների տեքստեր է բերում)¹⁰ և մի շարք այլ իրողություններ (խորենացու տեղեկությամբ Բյուզանդիոն ուսումնառության էին մեկնել նաև Հովհանն ու Արձան աշակերտները, Աթենքից Բյուզանդիոն էր դարձել և ինքը պատմիչը)¹¹, ապա հիմքեր կունենանք ասելու, թե արդեն IV դարից իսկ Բյուզանդիայի մայրաքաղաքում հայերի որոշ քանակություն պիտի լինեիր, այլ կերպ՝ հայոց համայնք պիտի դոյութուն ունենար։

1. 4. Թե հայոց այդ ենթադրելի քանակությունը այսպես կոչված ազդային կազմակերպվածություն որևէ եղանակ՝ հաստատության ձևով ուներ թե ոչ՝ չենք կարող ասել, թեև հաճախակի երթևեկի իրողությունը նման մի բան հուշում է։ Այս պարագային վճռականորեն անհրաժեշտ է տարբերակել կացությունը մինչև V դարի վերջ և նրանից հետո։ Մինչև Դվինի 506 և 554 թթ. ժողովները, քանի զեռ եկեղեցին պահում էր իր տիեզերականությունը, հա-

4 Կ ո ղ ո ս ն. Վարք ՄԵՐՈՎ Մաշտոցի. Երևան, 1994, էջ 96 [Ժէ]։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, էջ 97։

7 Նույն տեղում, էջ 100։

8 Նույն տեղում, Մաշտոցի կենդանի մասնավորեցնում է և այդ «հոգեոր պիտոյից» ինչ լինելը՝ Ս. Գրբի հաստատուն օրինակ, Ս. հայրերի մեկնություններ, նիկիական և հիփեսոսական կանոններ բերել՝ թարգմանության դործը Սահակի ղեկավարությամբ շարունակելու համար։

9 Մ ո վ ս է ս Խ ո Ր Ե ն ա ց ի, III, ԺԳ, ԻԱ, ԻԹ, Ներսեսի հետ առնչվող խնդիրների քննությունը տե՛ս Nina Garsolan. Quidam Nerseus? A Note on the Mission of St. Nerses the Great. „Armeniaca“, Venice, 1969, p. 148—164.

10 Նույն տեղում, III, Մէ։

11 Նույն տեղում, III, Կ. ԿԲ, ԿԸ։

լիքը Կ. Պոլսում ազգապատկան եկեղեցի ու նաև ազգային հանգստարան ունենալու անհրաժեշտություն չէին տեսնում, որովհետև բյուզանդական հայրապետական իրավասության սահմանները ամփոփում էին ողջ երկիրը և բոլոր քրիստոնյաները, մինչդեռ Քաղկեդոնի որոշումները մերժելուց հետո բյուզանդական հայր, եթե նա մնում էր «ազգայնացված» դավանության հետևորդ, այլևս սեղի հայրապետության ենթակայություն չունի, որովհետև Մ. Որմանյասի խոսքերով՝ «Մեր ուղղափառ եկեղեցին հայրապետության սահմանները... կը հաստատվին Հայաստանյայց, բոլոր անձերուն մեջ»¹²։ Նոր պայմաններում արդեն Կոստանդնուպոլսում հաստատվող հայերը պետք է ունենային իրենց աղոթատեղին (եկեղեցի, մատուռ) ու գերեզմանատունը¹³։ Ինչպիսիք պատահական չէ, որ Հովհ. Գաբրիելյանցու և նրա ուղեկիցների Կ. Պոլսում հաստատվելը պատմող, դեպքերին ժամանակակից ու ակնատես Հովհ. Սփևասյին ի մասնավորի արձանագրում է, թե հայերը զատվեցին հույներից և «մի մեծ պալատի (սրահի) մեջ, որ շերտել էր իրենց իշխանը, հավաքվում էին և պատարագ մատուցում իրենց պատրիարքի սահից հետո»¹⁴։ Այդ սրահ-աղոթարանի և «ուղղափառաց հանգստարանի» գոյությունը¹⁵, ինչպես նաև հայոց եպիսկոպոսների ու իշխանների շերտելությունը¹⁶ 572—574 թթ. միջոցին դավանական խնդիր քննարկող ժողովի գումարումը, կարծում ենք, անվերապահորեն ապացույց են թյուզանդիայի մայրաքաղաքում իր ինքնուրույն հոգևոր-մշակութային խնդիրներով զբաղվող, բավականաչափ բազմաթիվ, հետաքրքրություններ ու կարողություններ դրսևորող համայնքի առկայությունը։

2. 1. Որ այդ համայնքը, անկախ նրա անդամների դավանական պատկանելությունից, միջամուխ էր Թյուզանդիայի մայրաքաղաքի մշակութային անցյուղորձին և յուրովի արձագանքում էր նրան, կարելի է հավաստիանալ Սվտիրիսս Կոստանդնուպոլսեցու «Յաղագս զանազանութեան բնութեան և առանձնաորութեան» երկի հայերեն թարգմանության փաստով¹⁷։ Արտաքին հանդամանքները (հեղինակի երկրորդ պատրիարքական զահակությունը 577—582 թթ., աշխատության գրչագիր օրինակների հավաքումն ու շրջանառությունից հանելը 577—578 թթ.) հուշում են, որ թարգմանությունը կատարված պիտի լինի ճիշտ այն ժամանակահատվածում, երբ աշխատությունը ի մասնավորի ուղարկված էր պատկան հաստատություններին ու անձանց՝ առ ի ծանոթություն։ Այդ նշանակում է, թե պոլսահայությունը հիշյալ թվականներին հույն սուսավածաբան-փիլիսոփաների առաջ ներկայանում էր որպես կազմակերպված, հասու և հասարակաց խնդիրներին մասնակից մի համայնք, որի անդամների ձայնը լսելի էր միաբնակ-երկաբնակ վեճերի ու հիմնավորումների լսարանում։ Ավելորդ է հիշեցնել, թե հայ դրագետների գիական-

¹² «Սիրոն», 1970, էջ 418։
¹³ Ավելի հանրամասնորեն ան՝ Պարոտյր Մուրադյան, «Պոլսահայ վիմական տարեկիքը և տապանազգային դրականությունը».— «Դիվան հայ վիմագրություն», պրակ 9։
¹⁴ J. o. h. Ephésini: Hist. Eccles. Louvain, 1952, I, p. 61—62: Հայերեն թարգմանությունը տե՛ս Հ. Ն. Ակիբյան, Եղիշև վարդապետ և յուր Պատմություն Հայոց պատերազմի. Վիեննա, 1932, էջ 187: Հ. Պ. Անանյան, Եվտիրիոս Կ. Պոլսո պատրիարքին... մեկ գրությունը. «Armeniac», Venise, 1969, p. 321:
¹⁵ Chronique de Michel le Syrien. Éditée pour la première fois et traduit en français par. J.-B. Chabot, t. II, Paris, 1901, p. 300.
¹⁶ Հրատարակությունը տե՛ս Հ. Պարոտյան Անանյան, նշվ. աշխ., էջ 316—354: Իտալերեն թարգմանությունը՝ նույն տեղում, էջ 355—382, նաև Հ. Ն. Ակիբյան, Եվտիրի եպիսկոպոսի Կոստանդնուպոլսեցու Յաղագս զանազանութեան բնութեան և առանձնաորութեան.— «Հանդես Ամսօրյա», 1969, էջ 17—40, 159—198:

աստվածաբանական հետաքրքրության շնորհիվ թարգմանաբար պահպանվել է հույն պատրիարքի բնագրով անհետացած երկը¹⁷։

Այլ խնդիր է, թարգմանվում էր ի ճանաչումն նյութի, թև՞ իբրև առարկայի կամ ընդունելի տեսություն։ Ընդունված է ասել, որ թարգմանությունը կատարել է քաղկեդոնական անծանոթ մի հայ գրագետ։ Անշուշտ այդպես կարող էր լինել, սակայն եթև «Գիրք թղթոցի» Հովհաննես Լպիսկոպոստպետը նույն Գարեղնացին է, իսկ Մովսեսը՝ Եղվարզեցին, ինչպես նկատել է Ս. Արեշտյանը¹⁸, ապա ճանաչողական նպատակ ունի՝ առարկելու կամ հերքելու համար նրա գաղափարական հիմունքները։

2. 2. Անվերապահորեն Կ. Պոլսի հայոց դրական շրջանակներում է կազմավորվել ու ընդօրինակվել «Սրբոց վարդապետաց Հայոց Մովսեսի և Դաւթի հարցմունք ընդ երկարնակ շարափառսն» կամ այլ տարբերակով՝ «Պատմութիւն սուրբ վարդապետացն Հայոց Մովսեսի Քերթողի և Դաւթի Անյաղթ վիճիստովայի, որ կաշի էակք» խորագիրը կրող ժողովածու-ձեռնարկը¹⁹, նրա ստացողը հղել է նախորդ քննարկումից մեղ արդեն ծանոթ «Գուրդեն քարտուղար Հայոց Մեծաց ե թաղաւորացն պոթոյսպաթար» բյուզանդական պալատական պաշտոնյան։ Գրության ժամանակը որոշակի է՝ «ի ժամանակս յայս, յորում Հ և Զ (627) էր թուականն Հայոց»²⁰, ինչպես կրեում է, VI—VII դդ. սահմանագլխին Բյուզանդիայի մայրաքաղաքում Քրիստոսի բնության խնդրին վերաբերող դավանական քննարկումները դրաւլցնում էին ո՛չ միայն հողերը դոքծիչներին. բյուզանդական կայսրերին «սուրբ» մեծարանքով հիշատակող «առաջին սուսերակիրը» (πρωτοεξιστορευς) հայոց եկեղեցու որդեգրած դավանության հետևորդ ու ջատագով է, ուստի աչգային հեղինակույթուններին պատկանող կամ վերադրվող ստեղծադործութուններից մի տեսակ «լիազեն դավանաբանական» կամ «Հավատարմատ» է պատվիրում և ստանում՝ ի բավարարումն իր և իր միջավայրի նախանձախնդրությունը²¹։

2. 3. Պատմական պարագաները թելադրում են պնդել, որ VII դարում Կ. Պոլիս հաստատված հայոց դպրության սպասավորների թիվը նկատելիորեն ավելացած պիտի լիներ։ Դարի կեսերին կայսրության մայրաքաղաք ուսումնառության եկած Անանիա Շիրակացին պատմում է, թե «ի Կոստանդինուպոլիս... պատահակաց ինձ ծանաթից իմոց, որք անտի էին ուղեորեալք»

17 Եթև ճիշտ է Ս. Արեշտյանի վարկածը, ըստ որի Եվտիբիոս պատրիարքի «Յաղագս պանպանութեան բնութեան և առանձնաորութեան» երկը նույն է 627 թ. հայկական մի հիշատակարանի վկայած «էակաց գրի» հետ, ապա մենք ունենք այդ թարգմանության և՛ ստույգ ժամանակը՝ 575 թ., և՛ նախաձեռնողի անունը, որ է Կ. Պոլիս ապաստանած Հովհաննես Գարեղնացի կաթողիկոսը։ Այս պարագային պիտի ենթադրել, որ Եվտիբիոսի գիրքը հայոց միջավայրում շրջանակ է հեղինակի՝ Ամասիայի աբսորից վերագառնույուց առաջ 576 թ., իսկ «ի յունաց ի հայս» թարգմանելը հրամայող հայոց կաթողիկոսը մահացել է ոչ թև 574-ին, ինչպես այդ վկայում է Հովհան Եփեսացին, այլ 576-ից ոչ շուտ։ Հիշատակագիրը՝ «Գուրդեն քարտուղար Հայոց Մեծաց և սուրբ թաղաւորացն պոթոյսպաթարը», իր հաղորդած տեղեկության աղբյուր է հղում՝ «Վկայէ այսմիկ Սարգիս Արարացի Լպիսկոպոս՝ ճշմարիտ վկայութեամբ»։ С. С. Арешатян. Некоторые вопросы датировки армянских грекофилельких переводов VI века.—Вестник общественных наук, 1971, № 3, с. 74—79. «Նան՝ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—ԺՎ դարեր, Աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1938, էջ 13—14։

18 С. С. Арешатян. Указ. соч., с. 77—78.

19 Հիշատակարանի հրատարակությունը տե՛ս Գ ար և դ ի և Ա. կ ար և դ ի և ս, Յիշատակարանը ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 17—18, նաև՝ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—ԺՎ դարեր, էջ 13—14։

20 Նույն տեղում։

21 Պաշտոնյան, ի դեպ, ծանոթ է նաև հայոց այլ հեղինակությունների գործերին՝ Մամբրե, Պողոս, Աբրահամ, որոնց «պլս. պէս խորհրդոց» հետևորդ է։

հարկավ դարձյալ կրթություն ստանալու²²։ Աղբյուրները թույլ չեն տալես անուն, առ անուն ճշտելու Կ. Պոլիս եկած հայոց ինքնությունը։ Նրանցից մեկը պիտի լիներ, օրինակ, Կավիթ Բողոնանդցին, որը Ասողիկի տեղեկություններ էր «ուսուսալ գարուստ փիլիսոփայության» և հատնի նաև կայսր Կոստանդին (641—668), ուստի «զնա հրամայեց արձակել ի Հայս, զի երթևալ ի բաց հատեղ զհակառակություն և արասցէ միաբանություն»²³, Լիովին կարելի է պատկերացնել, թե որպիսի պատրաստվածության պարագայում նա կարող էր կանգնել հայ բարձրաստիճան հողերականության դիմաց՝ կայսեր հանձնարարությունը կատարելու, ասել է՝ հայերն ու հույները միազավանսության բերելու²⁴։

Կավիթ Բողոնանդցու կրտսեր սերնդակիցներից պիտի լիներ նաև Կ. Պոլսում թարգմանություններում ու դպրություններում պարագլուխ Փիլոն Տիրակացին։ Ասողիկը Տիրակացու անշարժ տոմարը հաստատելու կաթողիկոս Անաստասի մտադրության մասին պատմելիս ավելացնում է. «Ի սորա աւուրս էր և Փիլոն Տիրակացին, որ զՍոկրատայ Պատմությունն թարգմանեաց ի հայ լեզու»²⁵։

Մեսրոպ վրդ. Տեր Մովսեսյանը ժամանակին, Սոկրատի Պատմության հայերեն զույգ իմբարդությունները հրատարակելիս, հանդամանորեն բնակ է թարգմանության ժամանակի, թարգմանչի ինքնության և հարակից բազում այլ խնդիրներ²⁶։ Արևիկ վերաբերող միակ անմիջական տեղեկությունը պահպանվել է հիշատակարանում, ուր հինգ ժամանակագրական եղանակով տրրված է նույն 695/696 տարին և ապա՝ «թարգմանեաց Փիլոն Տիրակացի և առաջին ձեռնարկության մասին պատմությունն էն, թողեալ զինքնախաւսություն և զթուղթս այսոց և զճանս՝ յտղայս նուազությունն բարտի և մազազաթի եղևոյ յաւտարություն»²⁷։ Թարգմանությունը, ինչպես ցույց է տվել բազմահմուտ հրատարակիչը, բառական է, հիմնականում՝ ստույգ, որպես շատ թույլ է բերականության մեջ և անակազակ՝ երկու լեզուների ռեական նբբություններին²⁸։ Սակայն այս պարույան ամենեին չի մերժում մեր թարգմանչի՝ պոլսաբնակ լինելու իրողու-

22 Սրանց խորհրդով էլ, ապագա հանրադիտակը թողնում է մայրաքաղաքը և մեկնում «ի Տրուպիզոնտ Պոնտացոց»՝ հայերենագետ Տյուրիկոսի աշակերտելու։ Հայերեն ձեռագրերի իշատակարաններ, Ե—ԺԲ դարեր, էջ 18—20։

23 Անակառուցի Տարսնեցույ Ասողիկան Պատմությունն արեղերական. Ս. Պետրոսյան, 1865, էջ 91։

24 Ի վերջ, այս Կավիթ Բողոնանդցուն շլիտի շիտթել Կավիթ Թարգմանի հետ, որը Տարոնացի էր և կյուրապաղատ Համապատ Մամիկոնյանի հանձնարարությամբ 660-ական թթ. «Իմամակացոց բազումում» հայերեն էր թարգմանում Բարսեղ Կեսարացու «Ի ձեռնոց փրկին» ճառը։ Խնդրին վերաբերող աղբյուրների ու զրականության ցանկը տե՛ս Կ ի մ Մ ու լ ը ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 174—177։

25 Մ տ ե փ ա ն ո ս Տ ա ր օ ն Ե ց ի, էջ 99։ Այստեղից շլիտի կրակացնել, թե Սոկրատի Պատմության թարգմանության տարին անպայմանորեն զետեղելի է Անաստասի զանազանության (661—667) միջոցին, այլ որ Տիրակացին ապրել է հիշյալ կաթողիկոսի օրոք։

26 Սոկրատայ Արուստիկոսի Եկեղեցական պատմությունն թարգմանեաց Փիլոն Տիրակացի, և՛ Պատմություն վարուց Սրբոյն Սեղրեստրոսի, թարգմանեալ Արասուն Գրիգորի Զորոտրեցույ. հ. Ա և Բ. Աշխատասիրութեամբ Մեսրոպ վրդ. Տեր Մովսեսյան. Վաղարշապատ, 1897, էջ 2Ա—ՃԱ։ Սոկրատի երկի հունարեն բնագրի նորագույն գիտական հրատարակությունը տե՛ս Sokrates Kirchengeschichte. Herausgegeben von Cunler Christian Hansen. Berlin, 1995.

27 Բազմաթիվ վերադրություններից կարևորներն են Սոկրատայ Արուստիկոսի..., էջ 2Բ, Գ ա ր և զ ի ն Ա կ ա թ ո ղ ի կ ո ս. Ցիշատակարանը, էջ 49—50, Հայերեն ձեռագրերի իշատակարաններ, Ե—ԺԲ դարեր, էջ 21—22։

28 Սոկրատայ Արուստիկոսի..., էջ 2Բ—ՂԵ։

թյունը: Քերեա՝ Կառաջին՝ ձեռնարկութեամբ արտահայտութիւնը մի տեսակ վերաբերեցութեան է՝ թորդմանութեան անդրանիկ փորձ իմաստով²⁹:

Յ. 1. VI հարի 20-ական թթ.: Գերմանոս պատրիարքի զահակայութեան տարիներին, Գլինի և Սյունիքի վարդապետարանները, անցած Ստեփանոս Սյունիցին, Ալյրիվանից միտրան Գրիգոր Գուրիկի հետ, Աթենքում փոխտփալութեան և աստվածաբանութեան մեջ համանալուց հետո, հաստատվում է Կ. Պոլսում: Տեղիս հայոց միջավայրում Սյունիցու պատրաստութեան ու հմտութեանը նկատողներից մեկն է հունական աստվածաբանական գրականութիւնը: Հայերեն թարգմանելու նախանձախնդիր պաշտոնյա և դիտուն Դավիթ Հուլպատոսը Գատիով Գերմանոս պատրիարքի հետ ունեցած շփումներին փաստիք, ինչպես նաև նրա՝ Առ Հայս գրած նամակը: Հմտացած շփումներին իրողութեանից, Մտեփանոսը ճանաչում է ունեցել և հույն հոգևորականութեան միջավայրում: Սակայն կարևոր կենսադրական այս մանրամասները չեն, այլ այն, որ Բյուզանդիայի մայրաքաղաքում գտնվելու տարիներին ճիշտ այդ Դավիթ Հուլպատոսի հեղինակացութեամբ նա հայերեն է թարգմանում աստվածաբանական մի քանի երկր, որոնք հունական փառքրիստոնեական մտտենագրութեան նվաճումների թվին են պատկանում³⁰: Մասնափորձային, բոտ պահպանված հիշատակարանների, այդ երկերն են:

ա) Մատենագրութիւնը՝ Դիոնիսիոսի Արիոպպացուց, ուր ներառված են «Պատճառ Դիոնիսիոսի» («Վարք Դիոնիսիոսի և լուծումն գրոց նորին, թարգմանեալ ի Ստեփանոսէ Սինեղոյ»), «Թուղթ Դիոնիսիոսի Արիոպպացուց առ Տիտոս, վասն ննջման Մարիմայ», «Թուղթը զաննվանք», «Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց»: Թարգմանութիւնը հատկորեն թվագրված է 712 թվականով և կատարված թիւստուց օրինակայ ի Կոստանդինուպոլսի, ի ձեռն Դավիթ Հիւլպատոսի և թագաւորական սեղանոյ: Կինատի և ի ձեռն Ստեփաննոսի քահանայի և քերթողի, աշակերտի ածառն Մովսիսի Սիւնկաց Եպիսկոպոսի³¹:

բ) Գիրք պարտպմանց կիրողի Ալիքսանդրացուց, թորդմանութեան մասնակը՝ 716 թ. և զրեթե բառացիորեն նախորդ հիշատակարանը կրկնող տեղեկութիւններով³²:

գ) Մեկնութիւն Ղեւտիկոսի, որի 716 թ. կրող հիշատակարանը պահպանվել է³³:

4. Ժողովածու բործող Գրիգորի նիւսացուց³⁴: Հիշատակարանը նույնական է նախորդների հետ, թվականը՝ 717:

29 Մատենագրութեան ձեռագրերից մեկում (Ն. 5254) VI հարի. «Անանուն ժամանակագրութիւն վերաբառութեամբ հարտնի րնադրի սկզբում գրված է «Եստ. Փրիլոնիս. Անվան այդ իշատակութիւնը և մանավանդ Հիւլպատոսի և Ստեփանոսի թագած Յատվածներում Ասկրատի Պատմութեան թարգմանութեանը ինտրոյ թյունը կալումների ապարտութեանը են վարկած առաջադրելու, թե 686 թվականով ավարտվող «Ժամանակագրութեան» կազմողը ևս նույն Փրիլոն Տիրակացին է (Հրաչ. Քարթլի կյան. Անանիա Տիրակացուն վերագրվող «Ժամանակագրութեան» և նրա րանաջգի հարցը. — «Թանգեր Ատենագրութեան» Յ. 8 (1967), էջ 71—76): Ենթադրութեան նեմ առարկութեան ակա. Գ. Ե. Գրիգորյան և Ար. Կ. Անանիա Տիրակացու «Ժամանակական կոնոնը» կամ «Քրոնիկոնը» — «Թանգեր Ատենագրութեան» Յ. 15 (1986), էջ 31—42:

30 Տե՛ս Մ. Ե. Կոնոպ վրդ. Գր. Գրիգորյան. Ատեփանոս Սյունեցի. Պելլոսթ, 1923:

31 Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—Ժ գրքեր, էջ 24:

32 Նույն տեղում, էջ 25:

34 Ժողովածու ընդգրկված և Ատեփանոսի մատակցութեամբ թարգմանված գործերի ցանկն ու քննութիւնը տե՛ս Կիմ Մուրադյան. Գրիգոր Հյուսացիի հաւ մատենագրութեան մեջ. Երևան, 1992, էջ 59—74: Մենք այստեղ չենք անդրադառնում «Յաղագս բնութեան մարդոյ» երկի հեղինակ Նեմեսիոսի և Գրիգոր Նյուսացու շփութեան խնդրին, Այդ մասին մանրամասն

Ստեփանոս Սյունեցին հայոց մատենադրությունը հարստացրել է աստ-
 վածարտնական-փիլիսոփայական և բնադիտական առավել հեղինակավոր
 նվաճումների թարգմանություններով, նաև, տնհրածեղտություն պարադալին,
 այդպիսիք օժտել «պատճառներով» կամ մեկնաբանությամբ: Աղբյուրների
 վկայությամբ, օրինակ, «Սուրբն Ստեփաննոս՝ ըստ տուեցելոյ նմա իմաստու-
 թեան ի վերուստ, եղ ի վերայ նորա (իմա՛ Արիտպաղաջու «Յաղագս երկնա-
 յին րահանայակտութեան:ց»—Պ. Մ.) լուծմունս մեկնաւորէն, որ երևի
 մինչև յայտար»³⁵, ետսուն է և հետեւյալ իրողությունը. Պատրիարքի նամա-
 կը Հայաստան բերող նույն Ստեփաննոսն էլ «լողնապաճուճ հանճարով և դի-
 աութեամբ՝ բան առ բան լուծանելով» դրում է նրա պատասխանը³⁶: Ուրեմն՝
 կարելի էր տարիներով կայսրության մասին լղաքում ապրել, հարաբերու-
 թյուններ ունենալ տեղի պատրիարքի հետ և սակայն պատշաճաբար իր դավա-
 նությունը, անհրաժեշտության պարագային հերքել «դառասպելալուստ բան
 նոցա... ամենայն իմաստութիւն նոցա»: Ավելին, երկաթնակ իշխան Սմբատ
 Բաղդատունու հետ ունեցած դավանական վեճից հետո, մահվան սպառնալի-
 րից աղատվելու համար մեր արդյունավոր մատենագիրը ապաստան է դրա-
 նում՝ Կ. Պոլսում բնակվող «հմուտ առաւարին իմաստից» ուղղափառ միայ-
 նակեցի մոտ³⁷. Քանի որ հայոց եկեղեցւոյանություն պատկերացմամբ «ուղ-
 դափաոր» աղգային եկեղեցու պաշտոնական որակումն է, ուրեմն «արտաքին
 իմաստից» (իմա՛ փիլիսոփայության) այդ հմուտը ևս Բյուզանդիայում ապ-
 ըող ու զործող հայազգի էր: Հետաբերքի է, որ այս երկրորդ «այցելության»
 ժամանակ Ստեփաննոսը առիթ է ունենում ղավանական խնդիրներ քննարկել
 Լեոն Իսապրայն (717—741) կայսեր հետ, օղտվել արթունի գրողարանից
 («բանալ առաջի իր դարկեղս առողջն»), ապա և կայսեր «որդորով Հռոմ
 ցնալ՝ «յարկեղս մեծի եկեղեցւոյն» առողտումներ կատարելու հսկմար³⁸:

Թե հուշարեւելից կատարած իր մյուս թարգմանություններից³⁹ արկը որը
 կարող էր Կ. Պոլսում իրազորած լինել՝ դժվար է ասել, սակայն որևէա էր
 սվասն թարգմտութեան հասնալ ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպո-
 լիս»՝ հասկանալի է ինքնին⁴⁰:

3. 2. Թերես Կ. Պոլսում հայերենի թարգմանված մատենագրական հու-
 շարձանների շարքը պիտի դասել տակավին պատմաբանասիրական ուսում-
 նասիրության կարոտ «Պատմութիւնն սուրբ Քեղարզեանն և այլ սուրբիկնա-
 կանացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ» երկը, որն, ըստ հիշատակարանի. «հ
 հոսմ զդէ ի հայ թարգմանեղաւ և բերաւ ի Հայս, յորում էր թուրքանն ՔՀԶ
 (727)»⁴¹, Մեկ այլ բնագործնականության տարբերակում ասված «Տ Եր Կր ի
 պատմագրի թագաւորութեան քաղաքին Կոստանդնուպոլսի և այլ պատմե-
 ցաւ. ...ի հոսմ զրոյ ի հայ դիը թարգմանեղաւ և արիական բերաւ ի Հայս ի
 թվիս Հայոց ժԱ և Ք-ն» (662): Մասնավոր քննություն է տնհրածեղտ՝ պար-
 դելու համար երկիս ինչ լինելը: Բյուզանդական ո՞ր պատմագրի երկն ի նկա-

ներեն տե՛ս Հ. Հ. Տ ա շ յ ա ն. Մատենագրական մանր ուսումնասիրությունը. մասն առա-
 շին, Ա. 2, Վիեննա, 1895, էջ 1—22:
 35 «Սիոն», 1931, էջ 215, հմմտ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 15:
 36 Նույն տեղում: Պատրիարքի նամակի հրատ. տե՛ս Գիրք թղթոց, Արուսաղէմ, 1994, էջ
 435—468:
 37 «Սիոն», 1931, էջ 237: Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 18:
 38 Նույն տեղում:
 39 Նրանց զանկը տե՛ս Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 29—36:
 40 Գիրք թղթոց, էջ 435: «Պատասխանի թղթոյն, զոր գրեաց Տէր Ստեփաննոս Արևեկաց
 եւ Իսկոպոս առ Տէր Գերմանոս Կոստանդնուպոլսի հայրապետն, որը երկու բնութիւնս և եր-
 կուս և երկրորդութիւնս և երկուս կամ խոստովանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և որը ի
 կենդանաբար խորհուրդն չուր խառնեն՝ հետեւալը ժողովոյն Քաղկեդոնի»:
 41 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—ԺԲ դարեր, էջ 27—28:

տի ունենալը և թարգմանություն սույդ ժամանակն ու թարգմանչի ինքնությունը:

4. 1. Հայերի աստիճանական ե կրթման-կրթման խմբային զաղթը կայսրության տարածք, ապա ե Ռյուզանդիայի արևելյան ու հարավ-արեւելյան սահմանների ծախսում IX դարում հարկավ պիտի ստվարացնեն Կ. Պոլսում հաստատված հայությունը: Այդ դարում կատարված ներքաղաքական դրեթև բոլոր անցուղարձերին, ներառյալ կայսրերի բարձրանալ-իջնելը, ապստամբությունները, արտաքին զորաց դեմ հաղթություն-պարտությունները ե այլն, հայկական ծագում կամ ազգակցություն ունեցող տարրի մասնակցությունը անվերապահ է⁴²: Ակտիվության այդ մթնոլորտում, բնականորար, պիտի աշխուժանար և հայոց մշակութային զործունեությունը մայրարազքում: «Հայ տարրը,— դրում է Պ. Խարանխար,— դերակշիւ էր նաև իններորդ դարուն կայսրության մտավորական կյանքին մեջ: Ռյուզանդական կայսրության մեջ մտավորական զործունեությունը երբևք չէր դադարած զոյություն ունենալի, բայց դպարի կերպով տկարացած էր յոթներորդ ե ութերորդ դարերուն, և կրթական հաստատություններն ումանք, ինչպես այն համայարարներ, գոր Թեոդոսիոս Բ հիմնած էր հինդերորդ դարուն, հետզհետև անկման ենթարկված էր: Բայց իններորդ դարուն վերածնունդ մը տեղի ունեցած է, նոր դարկ մը տարվ ուսման, որ առավել կամ նվաղ շարժով պիտի շարունակվեր մինչև Կոստանդինուպոլսո վերջնական անկումը: Այս վերածնունդին մեջ ումանք կարևոր դեր մը կատարեցին: Ասոնց մեջ առաջին տեղը կը դրավեր Փոտ ապաղա պատրիարքը, որ անկասկած ուրիշ ուէ մեկ մը ավելի համայնադիտական հմտության տեր անձն էր Ռյուզանդական կայսրության մեջ: Հովհաննես, որ 815-ին պատկերամարտության վերանորոգման աստվածաբանական հիմեր դրած էր, իր ժամանակակիցների մեջ ծանոթ էր իբրև նախնայ դիտության քաջահմուտ անձ մը: Ուսուցիչը եղած էր Թեոփիլոս կայսեր, որ ուման առաջագիմությունը իր իշխանության կարևոր մեկ գործը նկատեց: Ուսման վերածնունդը իր պսակումը ունեցավ Կ. Պոլսո համայարանին վերահաստատումով Մանգուերայի պայատին մեջ և այս պատճառով ծանոթ է Մանգուերայի դպրոց անունով: Կեսար Վառդաս հիմեց և Լևոն Իմաստասեր, որուն մաթեմատիկոսի և հնության պիտությանց վարդապետի համբավը մինչև Պաղատ հասած էր, դպրոցին գլուխը կը զտրեմվին: Բազմաթիվ ուրիշներ, ինչպես Սյավներուն առաքարը Կոստանդին, ծանոթ են այն նպաստով, գոր բեռած են այդ շրջանին մտավորական զործունեության: Բայց Հովհաննես Քեոական, Փոտ, կեսար Վարդաս և Լևոն Իմաստասեր կը թվին եղած ըլլալ նախածնարկները և միշտ ումերը: Չորսն այ գեթ մասամբ հայկական ծագում ունեին... Այս մտղիկը, բնականաբար. բոլորովի՝ հելլենականացած ե՛րեհն: Արդարև, անհեթեթ պիտի ըլլար Փոտը հույն չհամարի: Այսու հանդերձ, կատելի է իորհիլ թև առաջո այս հաչիոր ձուլվելով շե՞ն փոխած այն մշակութթը, որ զիրենք ձուլած է»⁴³:

4. 2. Նրբին հարց է պարզել. թե բյուզանդական մշակութին ծառայող հիշյալ հայ-հելլենները հ՞նչ են իրենց հետ բերում հայկականությունից և հակառակը՝ նրանք հելլենականացումը իր կեիքը չե՞ թողնում հայոց մշակութի գարդաղման վրա: Եթե հարցադրում մասնավորեցնենք դարի խոշորագույն զործի՝ Փոտ Պատրիարքի օրինակով, ապա ամենևին ոչ պատահական պիտի համարել նրա ստանձնակի ջանադրությունը՝ շահելու հայոց օպաղաքական ու ուսմանական զործակցությունը: Փոտի հայերենով պահպանման թղթերը ինքնի՛: սուղոցույդ են այն կարևորություն, որ Կ. Պոլսի պատրիարքի աչքում ունեն Հայոց եկեղեցին, նաև հայկական իշխանությունները:

42 Սկզբնաղբյուրների հիմամբ նրանց շարունակական թվարկումն ու գնահատությունը տե՛ս Պ. Խարանխար, նշվ. աշխ., էջ 38—49:

43 Նույն տեղում, էջ 49—51:

նրա դրութիւններին մեկը շատ արագորակ է Չարարի կաթողիկոսին (855—877), մյուսը՝ Աշոտ Բագրատունի իշխանին⁴⁴։ Հագիվ թե կարելի լինի տարակուսել, թե Փոտի առ Հայս թղթերը դրելու թելադրանքը միայն պատրիարքական իրավասութիւնն ծավալման ցանկութիւնն ու Հայոց եկեղեցու որդեգրած դիրքորոշման նշանակալիութիւնը չէ, այլ նաև՝ այդ աշխարհի ու նրա մշակութի հանդէպ հայկենացած դործի ցուցարկրած իմացութիւնն, նաև կապ։ Պիտի կարծել, որ Փոտի այդ թղթերը որոշակի հետաքրքրութիւն են հարուցել Հայոց մատենագիրների միջավայրում։ Նման եզրակացութիւնն հիմք է տալիս Տիգրան Պահլավունու կորած պատմութիւնն այն դրվագը, որ պահպանվել է Մատենադարանի № 4166 ձեռագրում⁴⁵։

Մեր համոզմամբ, անտեղի չէ նաև Պ. Խարանիսի այն հարցադրումը, թե «արդևո՞ք այս հայերը ծուլվելով շեն փոխած այն մշակութիւնը, որ զիրենք ծուլած էր»։ Միայն պատկերահարգութիւնն և պատկերամարտութիւնն խընդրում հայադիներին կատարած դերը բավական է, որ մենք ճանաչենք ոչ զուտ հունական միջավայրից եկող տատանումների մի ողջ շերտ։ Գումարենք դրան Հայոց միջավայրում ձևավորվող աղանդների և այլախոհ վարդապետութիւնների առձաղանքը Բյուզանդիայում, Հայոց Լուսավորչի պաշտամունքի ճանաչումն ու նրա խճանկար պատկերի դեանդումը Ս. Սոփիայի տաճարում դարձյալ Փոտի պատրիարքութիւնն տարիններին կամ նրա մերձավոր շրջանում⁴⁶, և մենք դեթ մասամբ կպատկերադնենք մշակութային այն ազդեցութիւնը, ու իրեն հետևանք կարող էր ունենալ բյուզանդա-հայկական վերաբերումը Կրկնում ենք, և այդ ամբողջը տեղի էր ունենում հայոց, հատկապես պոլսահայոց քաղաքական ու ռազմական դործուն, հաճախ նույնիսկ կայսրութիւնն համար բախտորոշ ակտիվութիւնն պարագայում։

4. 3. ոճայինականացում» միջնադարի համար պայմանական հասկացութիւնը երկակի կիրառութիւնն ունի. մեկ դեպքում այն ներկայացնում է հայկական ծագում ունեցող, բայց լեզվով, դավանութիւնը ու ծառայութիւնը բյուզանդականացած դործիչների մի շերտ, մյուսում՝ իր միջավայրի լեզվական-մշակութային կնիքը կրող, բյուզանդական քաղաքակրթութիւնը ոչ խորթ, բայց ազդալիին մշակութիւնը և կյանքը սպասավորող գործիչների ներկայութիւնը։ Այդպիսիք են, մասնավորապես, պոլսարնակ կամ հանդամանքների բերումով առժամանակ այնտեղ հայտնված դրիչները, հեղինակներն ու թարգմանիչները, նախնայ հովանավորող պատվիրատու-ստացողները։ Այսպես, օտինակ, Թութայի անունով դրիչը 909 թ. Կ. Պոլսում «Հայոց սպայապետ Աշոտի» պատվերով (ենթադրվում է, թե խոսքը Սմբատ I-ի եղբայր Շապուհի որդի Աշոտի մասին է)⁴⁷ ընդօրինակում է Ավետարան և թողնում

⁴⁴ Այդ թղթերը ն. Ակինյանի հրատարակութիւնը տե՛ս 211, 1968, էջ 129—156, 439—450; նորագույն ուսումնասիրութիւնն հրատարակութիւնն՝ 2. Պոլոս Անանյան. Հայոց կաթողիկոս Չարարիի և իշխանաց իշխան Աշոտի թղթակցութիւնը Փոտ պատրիարքի և նիկողոյոս Ա պատի հետ. Վենետիկ, 1992; Տե՛ս նաև՝ К. Н. Юзбашьян. Армянские государства эпохи Багратидов и Византиев IX—XI вв., М., 1988, с. 261—267; П. М. Мурадян. Идея конфессиональной толерантности и межнационального согласия в армянской книжности XII—XIII веков. Ереван, 1997.

⁴⁵ Հրատ. տե՛ս Ա. Օ. Кесеян. Новообнаруженный отрывок из неизвестной истории Тиграпа Пахлавуни.—Кавказ и Византия, вып. 5 (1987), с. 145—155. Տիգրան Պահլավունու մասին տե՛ս 2. ն. Ակինյան. Ներսես Լամբրոնացի..., Վենետիկ, 1956, էջ 355—356:

⁴⁶ Հայկ Պերպերյան. Ս. Գրիգոր Լուսավորչի խճանկարը Այա Սոփիայի մեջ.—«Անդատան», № 8/9, 1958, էջ 113—131:

⁴⁷ Նրա մասին տե՛ս Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 215; Ենթադրութիւնն հեղինակը Գ. Հովսեփյանն է («Միջատակարանք», էջ 108):

ավանդական հիշատակարան⁴⁸, վերջինիս հունարանությունների թնչությունը կարելի է պարզել դրչի «հելլենականացման» աստիճանը՝ քնդամենը մի քանի տող կազմող և բանաձևումներով գրելիք այդ անբասում ունենք նեքանձնագեպ, ուեախոն, մտահարուստ, ուզմագուն, առյնլով, ներքնծայել, առտանաուրիւն և այլն: Ուրեմն վստահաբար կարելի է ասել, թե հայոց դրպությունը պոլսաբնակ պասավոտները անհաղորդ չէին հունարենին ու նրանում գործառնող տերմինարանությունը, ասել է՝ հունական դպրությունը:

Հայոց սպարապետի ուսացող լինելը ամենևին չի նշանակում, թե այն պիտի անվերապահորեն բերվեր Հայաստան: Կարևորն այն է, որ Բյուզանդիայի մայրաքաղաքում շարունակաբար կային ազդային դպրության մշակիներ, և նրանց ինքնությունը հաշտնի էր հայաստանաբնակներին, ներառյալ թագավորական արքունիքը:

4. 4. Կառելի է մատնացույցել և ուրիշ դեպք, երբ գրիչը կամ թարգմանիչը թագավորական հանձնարարությունում «դնալ զճանապարհս ուղեորութեան», հասնում է «Բիդանդոնս փ նորն Հոգմ, յերկրորդն Բարևոն», սրբյունում աշխատութեամբ» «յարկեղաց Սքրոյն Սոփիա» դստում-հանում հունականով փնտրվող դիրքը և թարգմանում կամ թարգմանել պայիք «ի յունականէ ի հայ լեզու»: Դիշտ այդպիսին է Պատմութիւն յաղազս մատին սրբոյ Առաքելոյն Պետրոսի և բերմանն ի Հոռմէ ի Հայք» երկի հայերեն թարգմանութեան ձևաորում առկա առաջարան-հիշատակարանի տված տեղեկությունը⁴⁹, Գրիչ Պանտալեոն/Պանտալեոնին ուղարկողը «արքայից արքայ մեծ պետութեանս տանս Հայոց» Ապուսահյ Համադասպն է, Կոստանդնուպոլիս հասնելու ժամանակը՝ Հայոց 414 (=965) թվականի հունվարի 6-ը⁵⁰, «Թարգմանեցի ի յունականէ ի հայ լեզու ձեռամբ արհնելոյն Յովսէփայ» ձևակերպումը կարելի է հասկանալ այսպես՝ Հովսեփը հունարենից թարգմանողն է, ինքը՝ Պանտալեոնը՝ գրիչը, դոտողը: Սակայն այստեղ ուշադրավր ոչ այնչա՛ն: Թարգմանություն փաստն է, որքան այն տեղեկություններ, որ գրիչը հաղորդում է Սուրբ Սոփիայի տաճարում ունեցած իր քննարկումներն մասին: Նա «հիացեալ ուշ յապուշ գարմաղմամբ» ներքողական է արտասանում «ի խորանն յուսոյ», ինչը տեղի «քաջ իմաստասերներոս այոյժ հաճուական» են դսնում, այստեղում կայսերու Ուշադրության առնելիս պարագա է՝ միաբերնյա ահանան ու մատենագիրը հաշտ ու խաղաղ է Սոփիայի գիտունների հետ, խաղաղությամբ վերադառնում է «յաշխարհս մեր» և հայոց Հարպմարդպանիո ստանում նրա ձեռքով գրված «դՊատմութիւն սրբոյ առաքելոցն յաշխարհս մեր»⁵¹:

4. 5. Չնառվոր, նդլնիսի հավանական է, որ Պանտալեոնի՝ լուս 965 թ. թարգմանություն կատարող «արհնելոյն Յովսէփայ» նույն Հովսեփ Կոստանդնուպոլսեցին է, հունական Հայամավորքի 991 թ. հայերեն թարգմանիչը⁵²: Նրա թողած հիշատակատանը մեղ հետաքրորող կարեեր հարցեր ու պատասխաններ է թելադրում: Մասնավորապես՝ «Ես ես անտրժանս և աղէտս և մեղաւոր թարգմտնիչս Յովսէփ, ծնեալ և սնեալ և ծերացեալ յաստուածապահ

⁴⁸ Հրատ. տե՛ս Գ. Հովսեփյան. Յիշատակարանը, էջ 107: Հայերեն ձևագրերի «իշատակարաններ, Ե-ԺԲ՝ դարեր, էջ 50:

⁴⁹ Ն. Ակիեյանի համոզմամբ հիշատակարանը վերաբերում է այժմ անհայտ մեկ այլ երկի թողմանության պարագային (Հ. Ն. Ակիեյան. Հովսեփ Կոստանդնուպոլսեցի՝ թարգմանիչ Յայմուտուրի, ՀԱ, 1957, էջ 4—5):

⁵⁰ Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., էջ 118—120, Հայերեն ձևագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ՝ դարեր, էջ 57—58:

⁵¹ Այս ուսույ մանրամասնություններ տե՛ս Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., էջ 118—120:

⁵² Աղղպես համոզված է Ն. Ակիեյանը Ավելին, նա վերահիշյալ Պանտալեոնին նույնացնում է Մասթեո՝ Ուրհայեցու եղած Ղևոնդի հետ, որը սերտ հարաբերություններ ունեեր հայոց թագավորների և բյուզանդական կայսր Հովհաննես Չմշկիկի հետ (Հ. Ն. Ակիեյան. Հովսեփ Կոստանդնուպոլսեցի, էջ 4—7):

բարձրագոյն Կոստանդնուպոլսի, և զհարէնի յնգու և զգիր ի տեղիս ուսեայ, ի միոյ հոռոս Տաւնացոյցէ թարգմանեցի Կնառ առաւատի (կարդա՛ զՃառս կարճառաւտի—ն. Ակինյան) ի Թորգոմական բարբառ ի ն և իս (991) Թուականի հայ (հայոց—ն. Ակինյան), և էր յԱղամալ 5357 (6509) անցեալ ամաց: Եւ յուզարկեցի ի Հայոց: Եկեղեցիս, որ ընթեռնուն և գրեն զիրաքանչիւր սրբոցն Հոգնութիւնս և յիշեն յանուանէ՛ զմեղաւոր հոգիս, և վարձս ի վարձաատողէն առցեն, ամէնսն ևս տախ տեղեկանում ենք, որ մեր թարգմանիչը «ծնեայ, սնեայ և ծերացեայ է» մայրաքաղաքում: Թերևս միտում է հուշել, թէ դրանով ինքը տարբերվում է իրեն ժամանակակից և դասակից այլ պորձիչներէր, որոնք կարող էին տեղում ծնված ու սնված, ծերացած չլինել: Եւ իրոք էլ, ալդպիսին էր, արինակ, Լորեմնի իր գործակից Պանտալեոնը⁵³: Եւ յուզարկեցի արքունական և Ս. Աղգիւպի մատենադպրաններին (արկեղաց) ծանոթ մատենագիրը շէր կարող իր քաղաքում նմանօրինակ Վհավաքածո փնտրել հայոց դպրութիւն համար, ուստի ուղարկում է՝ «առ որ անկ է»: Հարկավ իրավացի է ն. Ակինյանը, երբ Եզրակաղնում է, թէ «Յավսեփ ունեցած բլլալու է հմուտ հայերենագէտ փոքրին ուսուցիչ, որ սոքվեցուցած է իրեն հայրենի լեզուն և հորդորած է հետեղ բլլալ դասական դրականութիւն, ըստ կարի խորշելով հելլենաբան դպրոցի նորաբանութիւններն»⁵⁴: Հազիվ թէ կարելի լիներ կասկածել, որ նման ծրագրայլ ուսումնառութիւնը միաժամանակ սպայոց է տեղում ազգային դպրոցի գոյութիւնը⁵⁵:

Հավսեփ Կոստանդնուպոլսեցու «թարգմանած «Յայսմաուրքի» տարբեր հետաւածներէր ն. Ակինյանի բերած քաղումները ցույց են տալիս, որ մատենագիրը հաճախ թարգմանած նախնի հարստացնում է սեփական տեղեկութիւններով ու վկայութիւններով Ալդպիսին է, մասնավորաբար, Չմշկիկ կոյսեր Հեմսում և Վոխոնում (Բիւրխոն), ավարած սրբութիւնների (Քրիստոսի կաղամար, հոգաթափ, տերունական պատկեր) թվարկումը (հունվար, 1 Ա. 3), 740 և մանպվանդ 989 թվականների Երկրաշարժերի նկարագրումը, իրր ասնկաւ ձեռ եկեղեցւոյն Սոփիայ կամարն արեւտոց: Եւ բազում եկեղեցիք և բազմաբաշէն սպարանք և կամարակապ փողոցք կործանեցան: Եւ եկաց զտարի մի, և աճ մեծ ի քաղաքին եղև»⁵⁶:

⁵³ Հրատ. տե՛ս ն. Ակինյան, Եշվ. աշխ., էջ 3: Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա. 2. Կաղմեց 2. Համազասպ Ոսկեան. Վիեննա, 1963, էջ 693: նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—Ժ գարեւ, էջ 72—73:

⁵⁴ «Զայսլինի լեզու և զգիր ի տեղիս ուսեայ» մատենադրեցումը երկու նպատակ է հետապնդում՝ նախ ներդաստութիւն հայցել իր թարգմանութիւն մեզ առարկութիւն կամ դատարարութիւն հարուցող լեզվաբանական հնարավոր անհարթութիւնների համար, մանավանդ որ՝ թարգմանութիւնն ուղարկում է «ի Հայոց եկեղեցիս, որ ընթեռնուն» և լրագրեն նոր գրվագներով Այս դեպքում «ի Հայոց եկեղեցիս» ասելը նույնն է, ինչ որ «ի Հայոց աշխարհ» և սպա՛ւ ԼՍԽ խոսքը միայն լեզվին վերաբերելը սմշրածեցա՛ւ շէր լինի «զգիր ուսեայը» ևս ընդհանր Պիտի կարծել, թէ նշյալ արտահայտութիւնը նա փորձում է բացատրել, թէ ինչու լրացնելիքը ինքը տեղում չի կատարում:

⁵⁵ ն. Ակինյան, Եշվ. աշխ., էջ 3:

⁵⁶ ն. Ակինյանի խոսքերով «գիրտներ, թէ կար. հոն հաւ դադաթ. մը ազգեցիկ ոյժերով (ևսն Սպարկավալ) զձինքը եկեղեցական ճանաչելու, և այն հայ-հոռոմներու համայնքին մեջ» ն. Ակինյանի վարկածը որեւէ հիմնավորում չունի. ո՛չ Պանտալեոնի, ո՛չ էլ իր սեփական հիշատակարանում նոստանունը չի ուզեցվում հոգեբանականութիւն հուշող տերմինով, իսկ «հայ ոսոմ» լինելու դեպքում իր գործի լրացումը հայերեն երկրի մատենագիրներից շէր տեղեկելի (Ն. զաքեմ վերջերին. միտանակ-երկաթնակ խնդրեցիքը վերաբին թարգմացել էին):

⁵⁷ ն. Ակինյան, Եշվ. աշխ., էջ 8—9: Ս. Սոփիայի գմբեթի խոնարհման մասին խոսում են նաև Ասողիկը (էջ 250—251), Գրիգոր Նաոեկացիին (Մատենադրութիւնը, էջ 374—375), Ս. Ուռհայեցիին (էջ 89):

Ուրեմն՝ «իր Յայամաուորքը, զոր կոչած է Տօնացոյց, լոկ թարգմանութիւնն չէ, այլ թարգմանաբար խմբագրութիւնն»⁵⁸, քրիստոնեական գրականութեան կարևորագոյն հուշարձաններից մեկի հայկականացման առաջին տիտանական քայլը, որին պիտի հետևեն Գրիգոր Վկայասերը, Կիրակոս Արևելացին, Գրիգոր Անավարդեցին, Գրիգոր Մերենցը և այլք⁵⁹:

5. 1. Ավելորդ չէ հիշել Հովսեփին ժամանակակից մի քանի այլ երևելի հայազգի գործիչների ներկայութիւնը Կոստանդնուպոլսում: Գրիգոր Նարեկացու «Ապարանից ս. Խաչի պատմութիւն» ներբողյանի տեքստում երկար ու պերճաբան խոսովում է հայրենի Մոկաց երկրից «ի բուն ընկալութիւն ծովածաւալ, ջրափակ, անդրնդափոս, ահագնապարիսպ, բաղմարնակ քաղաքին և անմարանչելի ամրոցն սքանչելոյն Կոստանդնուպոլսիս»⁶⁰ եկած և պալատում «ղինուորող» մի «երագամիտ», «պատկանաւոր», «բարտ կարգարանութեան խօսից անթարթափ լեզուոյ», իսկ «բարտ աստուածային հոգելից իմաստութեանն յաւետ պարուրեալ» աւճի մասին (Ստեփանոս Մոկաց եպիսկոպոսի մտերկրալոր), որին ականջալուր են արքաները և որի ձեռքով 983 թ. ս. Կարապետի վանք (Ապարանք) է բերվում սուրբ մասունք կրող և բաղմազարդ խաչը:

Վերևում արդեն խոսք եղավ հայոց վարդապետ ՂեկնդիՊանտալեոնի մասին, որի հետ պրագրութիւնն էր վարում Հովհաննէս Զմշկիկը և հրավիրում «որ գտանեմ դքեղ յաստուածապահ քաղաքին մեր և տնդ արասցուք տօն մեծ հողաթափացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և սուրբ հերացն Մկրտչին Յովհաննու: Եւ այդ ահա հաճեալ ունիմ և դայս ինչ ի քէն, վասն զի խօսեսցիս ընդ մեր իմաստասէրսն և ընդ փիլիսոփայիցն մերոց, և ուրախացուք մեք ի ձեզ»⁶¹:

Իր արդյունավորութեամբ առանձնաբեր նշանակալի պիտի նկատել Տրոգատ ճարտարապետի ներկայութիւնը Կոստանդնուպոլսում: Հովսեփի տեղեկութիւններից որտե՞նք, որ 991-ին, երբ նա թարգմանում էր, երկրաշարժից խաբարւած Ս. Սոփիայի դմբեթն ու արևմտյան սյուրնը դեռ վերականգնված չէին, իսկ Լեոն Սարկավագի վկայութեամբ Վասիլ Խայսրը այն նորոգեց «վեց տարիներու ընթացքին»⁶², որեմն 991—997 թ. և Հետևաբար այդ տարիներին Բյուզանդիայի մայրաքաղաքում էր գտնվում հայոց մեծաշնորհ ճարտարապետ Տրատրու Ասողկեր ՆԼԸ (989/990) թ. երկրաշարժին վերաբերող տեղեկութիւնից հետո ավելացելու է. «նոյն ինքն Սոփիայն, որ կաթողիկէն է՝ հերձանիւր պատառմամբ վերուստ ի վայր: Վասն որոյ բազում օան եղև արհեստուոր ճարտարացն Յունաց առ ի վերստին նորոգել: Այլ անո զիպեսու ճարտարապետին Հայոց Տողատայ քարագործի՝ տայ զօրինակ շինուածոյն իմաստուն հաւճառով պատրաստեալ զկազմարար կազմածոյն և սկզբուորեալ ոչինչն, որ և զեղեցկապէս շինեալ պայծառ քան զառաջինն»⁶³:

Հարկավ կային և այլ հայազգի մշակութային գործիչներ, որոնց անուններն ու թողած առդյունքներ կարող են նոր ազդուրների լուսածոթիւնը:

5. 2. Մեծ նախընտրած նյութին հետևելով, առիթ չունեցանք ըննարկելու Բյուզանդական կալստութիւնն սահմաններում դասական կայսրութեան կրած

58 Ն. Ա կ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 1²:

59 «Յայամաուորքին» վերաբերող գրականութեան ցանկ աճ՝ ս Ն. Ա կ ի ն յ ա ն ի վերոբերյալ հոդվածի սկզբում, էջ 1—2:

60 Մրոյն հօրն մերոյ Գրիգոր Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնը, Վենետիկ, 1840, էջ 377:

61 Մ ա տ թ ե ո ս Ու ռ հ ա յ Ե ի. Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 28:

62 Leonis Diaconi. Caloensis Historiae, libri decem, Bonnae, 1828, p. 176 (X, 10). Հմմտ. Ն. Ա կ ի ն յ ա ն. Հովսեփ Կոստանդնուպոլսեցի... էջ 9:

63 Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. Ս. Պետրբուրգ, 1885, էջ 250—251:

վարիվերումները: Իհարկէ, դավանական հանդուրժողականութիւնը խորթ չէր կայսրութեան բաղաբաղանդութիւնը վարող շատ ու շատ գործիչներէ, որի դրսևորման արտահայտութիւններէց մեկն էլ մայրաքաղաքում (առավել ևս՝ դավառում) սպորող այլազգիներէ, այդ թվում և հայոց մատենագրական մշակութային գործունեութիւնն էր, բայց և կան շրջաններ, երբ դավանական հալածանքը սաստկանում էր, և աղղային վանականութեան երեւելի ներկայացուցիչներ հարկադրված էին լինում հեռանալ կայսրութեան սահմաններից: Կայսր Թոմասոս Լեկաբենոսի (920—944) և Բագրատունաց Աբաս թագավորի (929—973) օրոք, 939 թ., իրրև հետևանք միաբնակութեան դեմ հարուցած հալածանքի, Փոքր Հայքի Լիկանդոն գավառից Արշարունիք ևն ապաստանում Կամրջաձորի վանքի 40 միաբանները՝ Հովհաննէս Կամրջաձորեցու զրբիւստութեամբ⁶⁴, Եկեղեցական ավանդույթը այս հալածութեան հետ է կապում նաև Արշարունիքի Կապուտբարի, Շիրակի Հռոմոսի և Գուղարքի Մանանի վանքերի հիմնարկները⁶⁵, Հարկավ կլինէին նաև մայրաքաղաքից հեռացող գրիչներ ու մատենագիրներ, մանավանդ այն հոգևորականները, որոնք շունեին կայսրութեան արքունիքում, բանակում կամ այլուր ծառայող հայազգի աղղեցիկ հովանավորներ:

5. 3. Որքան էլ Բյուզանդիայի պատմութիւնը դիտենք միաժամանակ իրրև այլազգուաց, այդ թվում և հայոց պատմութիւն, մոռանալու չէ, որ կայսրութիւնն ունէր իր խնդիրներն ու առաքելութիւնը, որոնք չէին կարող ծրարված լինել այլէթնիկ բնակչութեան համայնքային շահերը անպայմանորեն հարգելու սարտականութեամբ: Ավելին, ոչ քիչ դեպքերում այդ այլէթնիկ համայնքները կարող էին դաշնակցել կայսրութեան արտաքին վտանգ ներկայացնող բաղաբաղան ուժերի հետ: Եվ այդ խնդրում ևս հայերը նկատելի նախաձեռնութիւն էին ցուցաբերում (օրինակ՝ դաշնագրութեան փորձերը արարների հետ, նրանց մասնակցութիւնը երկրի ներսում աշխուժացող աղանդներին և այլն): Բյուզանդական բաղաբաղանութեան ոլորտ ընդգրկված հայութիւնը կայսրութեան անցուղարձի գնահատութեան մեջ միասնական չէր կարող լինել: Աղղայնացված եկեղեցու բյուզանդաբնակ դավակները կրում էին հույն հոգևորականութեան անհանդուրժողական վերաբերումը, ուստի եթէ թշնամիներ չէին, ապա իբրև բարեկամ գոնէ կասկածելի էին: Ինչ վերաբերում է հունադավան հայոց, վերջիններս արդեն սկսել էին իրենց դիտել իբրև հայկական միջավայրից, համայնքից օտարվածներ, թեև բավական հստակ գիտակցում էին նաև սոսկ դավանութեամբ հույն լինելու պարագան, բայց այլևս սովելի հույն էին մտածողութեամբ, մշակույթով ու բաղաբաղան կողմնորոշմամբ, քան հայ:

Այս տմենը, բնականաբար, իր արձուղանքը պիտի գտներ հայոց թե՛ քաղաքական և թե՛ մշակութային զործունեութեան ոլորտում: XI դարում այդ հակառականութիւնը ավելի ցցուր գրսևորվեց՝ մանավանդ բաղաբաղան նոր իմրումների պարաղայում:

⁶⁴ Ա ս ո գ ի կ. Էջ 173: Առավել մանրամասն է «Պատմութիւն ս. Կենարարին և սոսկայի ս. Նշանին» թվ որպէս բերու յաշխարհն Արշարունեաց ի Կամրջաձորոյ» (Ա լ ի շ ա ն. Այրաբաս. 1890, Էջ 547—549): Այստեղից ևն տեղեկութիւններ բաղում Կիրակոս Գանձակեցին (Էջ 84—85) և Վարդան Մեծը (1862 թ., Էջ 88): Հարցի ուսումնասիրութիւնը տե՛ս Ս և դ թ ա կ Բ ա թ ի ո յ ա ը յ ա ն. Նորահայտ արձանագրութիւն Հաղարտութեան.— «Էջմիածին», 1967, Էջ 56—64:

⁶⁵ Ս. Բ ա թ ի ո յ ա ը յ ա ն. նշվ. աշխ., Էջ 59—60:

АРМЯНСКАЯ КНИЖНОСТЬ В КОНСТАНТИНОПОЛЕ
(V—X ВЕКА)

Доктор истор. наук П. М. МУРАДЯН

Резюме

Участие армян в политической, хозяйственной, военной и культурной жизни Византии учтено и исследовано в трудах византинистов Н. Адонца, С. Тер-Нерсисян, П. Харантса, А. Каждана и других. Проблемы же истории армянских поселений империи, в частности армянской общины в Константинополе в V—X вв., в том числе ее внутробщинной и межобщинной литературно-культурной деятельности, практически остались неучтенными. Свод сведений в сочинениях средневековых историографов, колофонов рукописей и иных вспомогательных источников позволяет в истории армянской книжности выделить ряд оригинальных и переводных памятников, возникших в результате культурной деятельности армянской общины в столице империи. Учет тематики и хронологии возникновения этих памятников, их лексических и иных особенностей служит источником определения круга интересов армянской общины, уровня ее культурной эллинизации, путей и способов приобщения к родному языку и культуре. Немаловажный интерес представляет уровень причастности столичной армянской общины к проблемам конфессии.

ARMENIAN LITERATURE IN CONSTANTINOPLE
(the 5—10th centuries)

Prof.-D-r P. M. MOURADIAN

Summary

Armenians' contribution to the political, economic, military, cultural life of Byzantine is studied by N. Adonts, P. Kharants, S. Der-Nersesyan, A. Kajdan and others. The problems of the history of the Armenian settlements in the empire, partially the problems of the Armenian community in Constantinople in V—X centuries as well as the intercommunal and between communal literary-cultural activities practically remained unstudied. The data in the works of the medieval historians and of the colophons of the manuscripts and of other supportive sources enable to mark out a number of original and translated monuments as results of the cultural activity of the Armenian community in the capital of the empire. With due regard for the themes and chronology of the origins of these monuments, their lexical and other features are the sources of the definition of the interests of the Armenian community, the level of its cultural hellenization, ways and means of communication of the native language and culture. The level of the involvement of the Armenian community of the capital in the problem of confession is of more importance.